ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի Նախագահի
պարտականությունները կատարող՝
պարոն Դավիթ Գրիգորյանին

HBAMCEO240055
03/20/2024

Հարգելի պարոն Գրիգորյան,

Ի պատասխան Ձեր 15.03.2024թ. թիվ 03/274/3725-2024 գրության, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն պատրաստ է իր մասնակցությունն ունենալ Երևան քաղաքի Առնո Բաբաջանյան փողոցի N 42/5 հասցեում կառուցվող բազմաբնակարանային շենքային համալիրի նախագծին և շահառուներին տրամադրել հիփոթեքային վարկեր՝ ներքոնշյալ հատուկ պայմաններով.

| | |
|---|---|
| Վարկի արժույթ | ՀՀ դրամ |
| Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք | 12.5% փոփոխվող տոկոսադրույք* |
| Նվազագույն կանխավճար | 10% |
| Վարկի առավելագույն ժամկետ | 20 տարի |
| Վարկի տրամադրման եղանակ | Միանվագ կամ փուլային՝ փոխանցելով կոմիտեի գանձապետական ավանդային հաշվին (համաձայն ՀՀ Կառավարության կողմից սահմանված կարգի և պարբերականության) |
| Մարման եղանակ | Մայր գումարի հավասարաչափ մարումներով կամ անուիտետային՝ շահառուի ընտրությամբ |
| Վարկի վաղաժամկետ մարման տուգանք | Չի կիրառվում |
| Վարկի տրամադրման կամ հայտի ուսումնասիրության վճար | Չի կիրառվում |
| Վարկի ստացման և հետագա սպասարկման հետ կապված ծախսեր | Շահառուն կրում է գրավի պայմանագրի վավերացման ու գրանցման ծախսերը |
| Ապահովագրություն | Անշարժ գույքի պարտադիր ապահովագրություն, որը կարող է հաշվարկվել վարկի մնացորդից՝ շահառուի ցանկությամբ (գույքի սեփականության վկայականի տրամադրումից հետո)<br>Դժբախտ պատահարներից ապահովագրություն՝ շահառուի ցանկությամբ: |

*Վարկի անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել Բանկի ՀՀ դրամով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքի վերանայման դեպքում: Առավել մանրամասն տեղեկատվությունն առկա է Բանկի կայքի Մանրածախ Հաշվարկային Տոկոսադրույք - HSBC AM բաժնում:

Գլխավոր գործադիր տնօրեն՝ Իրինա Սեյլանյան

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0015, Պարոնյան 42, տարածք 90
Հեռ.՝ +374 60 655 000 Ֆաքս՝ +374 60 655 501 Կայք՝ www.hsbc.am
Գրանցված է Հայաստանի Հանրապետությունում
Գրանցման համար 67

"HSBC Bank Armenia" CJSC
90 Area, 42 Paronyan Street, Yerevan, 0015, RA
Tel: +374 60 655 000 Fax: +374 60 655 501 Web: www.hsbc.am
Registered in the Republic of Armenia
Registered number 67

BYBLOS BANK ARMENIA

N 476
21.03.24

ՀՀ քաղաքաշինության կոմիտե

Նախագահի պարտականությունները կատարող՝ Դավիթ Գրիգորյանին

Հարգելի պարոն Գրիգորյան,

Ի պատասխան Ձեր 15/03/24թ.-ի թիվ 03/27.4/3725-2024 գրության տեղեկացնում ենք, որ «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲ ընկերությունը հայտնում է իր պատրաստակամությունը վարկավորել հանրային ծառայողներին բնակարանով ապահովման ծրագրի Երևան քաղաքի Առնո Բաբաջանյան փողոցի N 42/5 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրի բնակարանների և ավտոկայանատեղիի շահառուներին՝ ստորև նշված պայմաններով.

| | |
|---|---|
| **Արժույթ** | ՀՀ դրամ |
| **Վարկի ժամկետ** | Մինչև 20 տարի<br>(մինչև վարկառուներից յուրաքանչյուրի կենսաթոշակային տարիքի լրանալը) |
| **Կանխավճարի նվազագույն չափ** | Գույքի միավորի կողմնորոշիչ գնի 10%-ից ոչ պակաս,<br>ավտոկայանատեղիի արժեքի 20%-ից ոչ պակաս |
| **Տարեկան անվանական տոկոսադրույք** | 13.25%<br><br>Աշխատավարձը Բիբլոս Բանկ Արմենիա փոխանցելու դեպքում՝ 12.25% |
| **Տոկոսադրույքի տեսակը** | Հաստատուն առաջին երեք տարիների ընթացքում, այնուհետև լողացող* |
| **Վարկի մարման եղանակ** | Անուիտետային |
| **Ապահովագրություն** | Գույքի ապահովարություն՝ իրականացվում է Բանկի կողմից |
| **Վարկի տրամադրում** | Միանվագ կամ փուլային |
| **Տրամադրման վճար, վաղաժամկետ մարման տույժ** | Չի կիրառվում |
| Մնացած պայմանները՝ համաձայն Բանկի սակագների և պայմանների | |

*Տոկոսադրույքը անփոփոխ է առաջին 3 տարիների ընթացքում, այնուհետև հաշվարկվում է Բանկի հաշվարկային ցուցանիշ գումարած 5.5% մարժա բանաձևով:

**Ձեռքբերվող գույքի ապահովագրությունը կատարվում է սեփականության վկայականը ստանալուց հետո:

Հարկ ենք համարում նաև նշել, որ ներկայացված պայմանները Բանկի կողմից ենթակա են փոփոխման, նախապես այդ մասին ծանուցելով:

Հարգանքով՝

Հայկ Ստեփանյան

Գլխավոր գործադիր տնօրեն

N 2217-02

«25» 03 2024

**Հայաստանի Հանրապետության**
**Քաղաքաշինության կոմիտեի նախագահ՝**
**Պարոն Եղիազար Վարդանյանին**

Հարգելի պարոն Վարդանյան,

Ի պատասխան 15.03.2024թ. Ձեր թիվ 03/27.4/3725-2024 գրության՝ հայտնում ենք «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ պատրաստակամությունը՝ իրականացնելու ք. Երևան, Առնո Բաբաջանյան N42/5 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրի բնակարանների և ավտոկայանատեղիների ձեռքբերման նպատակով հիփոթեքային վարկերի տրամադրման գործընթացը՝ հետևյալ հիմնական պայմաններով՝

**Հիփոթեքային վարկավորման պայմաններ՝**

| | |
|---|---|
| Վարկի արժույթ | ՀՀ դրամ |
| Վարկի նվազագույն/առավելագույն ժամկետ | 18/240 ամիս |
| Նվազագույն կանխավճար* | 10% |
| Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք** | 12,9% |
| Տոկոսադրույքի տեսակ*** | հաստատուն ճշգրտվող |
| Վարկի մարման եղանակ | անուիտետային կամ զսպանակաձև |
| Վարկի առավելագույն գումար | 150,000,000 ՀՀ դրամ |
| Գրավի առարկա | Անշարժ գույքի ձեռք բերման իրավունք |
| Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետ | Մինչև 5 աշխատանքային օր |

**-50% և ավել կանխավճարի դեպքում՝ վարկը կարող է տրամադրվել առանց եկամտի վերլուծության*
***- առանց եկամտի վերլուծության դեպքում՝ 14,5%*
**** - տոկոսադրույքն ամփոփոխ է առաջին 5 տարիների ընթացքում*

**Ավտոկայանատեղիի վարկավորման պայմաններ՝**

| | |
|---|---|
| Վարկի արժույթ | ՀՀ դրամ |
| Վարկի նվազագույն/առավելագույն ժամկետ | 6/120 ամիս |
| Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք | 16% |
| Տոկոսադրույքի տեսակ | հաստատուն ճշգրտվող |
| Վարկի մարման եղանակ | անուիտետային |
| Նվազագույն կանխավճար | Ավտոկայանատեղիի արժեքի 20% |

**Հարգանքով,**

**Վարչության նախագահ՝** **Գ. Թառումյան**

Կատ. Մ. Վարդանյան
Հեռ. 59-20-63 (651)

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Գլխավոր գրասենյակ
Հասցե՝ ՀՀ, Երևան, 0002,
Ամիրյան փող. 23/1
Հեռ.՝ +37410 510 910, 86 86
Ֆաքս՝ +37410 538 904
Էլ. փոստ.՝ bank@aeb.am
www.aeb.am

ARMECONOMBANK OJSC
Head office
23/1 Amiryan str., 0002, Yerevan
Republic of Armenia
Tel.: +37410 510 910, 86 86
Fax: +37410 538 904
E-mail: bank@aeb.am
www.aeb.am

26.03.2024թ. 01.2-08/066

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ

Պարոն՝ Եղիազար Վարդանյանին

Հարգելի պարոն Վարդանյան

Ի պատասխան Ձեր 15.03.2024թ-ի թիվ 03/27.4/3725-2024 գրության հայտնում ենք Ձեզ, որը <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ պատրաստակամ է համագործակցել և տրամադրել հիփոթեքային վարկեր հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում ք. Երևան Առնո Բաբաջանյան փողոցի N 42/5 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարանների ձեռքբերման նպատակով:

Հիփոթեքային վարկերի տրամադրման ժամկետները սահմանվում են 10-20 տարի, կանխավճարը նվազագույնը ձեռքբերման արժեքի 10 տոկոսի չափով, իսկ տարեկան տոկոսադրույքները Բանկի սեփական ռեսուրսներով տրամադրվելու դեպքում կկազմի 13.5% հաստատուն ճշգրտող տոկոսադրույք:

Կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով

տնօրենի տեղակալ Օ. Չիչյան

Կատարող՝ Ա.Երիցյան

Հեռ. 010-510-910, *9651#

FB1010E#318-24
27 մարտ 2024թ

ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահ՝
Պարոն Եղիազար Վարդանյանին

Հարգելի պարոն Վարդանյան,

Ի պատասխան Ձեր 15.03.2024թ.-ի թիվ 03/27.4/3725-2024 գրության՝ հայտնում ենք «Ֆասթ Բանկ» ՓԲԸ պատրաստակամությունը՝ իրականացնելու ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան Առնո Բաբաջանյան 42/5 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրի բնակարանների և ավտոկայանատեղիների ձեռքբերման նպատակով հիփոթեքային վարկերի տրամադրման գործընթացը հետևյալ հիմնական պայմաններով՝

| | |
|---|---|
| Վարկի նպատակը | ք.Երևան, Առնո Բաբաջանյան 42/5 հասցեում կառուցվող շենքից անշարժ գույք (բնակարան և ավտոկայանատեղի) /գնման իրավունք ձեռքբերման նպատակով |
| Վարկի արժույթ | ՀՀ դրամ |
| Վարկի նվազագույն/առավելագույն ժամկետ | 60-240 ամիս |
| Նվազագույն կանխավճար* | 10%*<br>*Ավտոկայանատեղիի դեպքում՝ 20% |
| Տարեկան անվանական տոկոսադրույք | 12.75% |
| Տոկոսադրույքի տեսակ | Ճշգրտվող հաստատուն տոկոսադրույքով (տոկոսադրույքը կարող է ճշգրտվել սկսած 37-րդ ամսվանից) |
| Վարկի գումար | 2,000,000 -150,000,000 ՀՀ դրամ |
| Ապահովգրություն | Չի պահանջվում |
| Վաղաժամկետ մարման տույժ | Չի կիրառվում |
| վարկի տրամադրում | Միանվագ կամ փուլային |
| Վարկի մարման եղանակ | Անուիտետային |
| Մնացած պայմանները՝ համաձայն Բանկի «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ»-ի սակագների և պայմանների: | |

Հարգանքով,

Գործադիր տնօրեն -
Տնօրինության նախագահ՝ Գարեգին Դարբինյան

*Կատարող՝ Հ. Շահնազարյան*
*Հեռ.՝ (+374 10) 51 00 00 /14 22/*

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ARMSWISSBANK

N 1659/06/4
29.03.2024թ.

ՀՀ Քաղաշինության կոմիտեի նախագահ
պարոն Ե. Վարդանյանին

Հարգելի պարոն Վարդանյան

Ի պատասխան Ձեր կողմից 15/03/2024թ-ին ներկայացրած թիվ 03/27.4/3725-2024 գրության՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն պատրաստակամություն է հայտնում մասնակցել «Հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման» ծրագրին:

Կից հավելվածում ներկայացված են Բանկի կողմից տրամադրվելիք հիփոթեքային վարկերի պայմանները:

Հարգանքներով՝

Գործադիր տնօրեն Գ. Մաչանյան

*Կատարող՝ Մելիք Պետրոսյան*
*Հեռ.՝ 060-757-000, 011-757-000 (ներքին՝ 209)*

Հավելված

# ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ ՓՈՂՈՑԻ N 42/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍՈՎ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

| | |
|---|---|
| Վարկի Ժամկետ | Մինչև 240 ամիս |
| Տարեկան տոկոսադրույք | 13* (փոփոխական) |
| Նվազագույն կանխավճար | Բնակարանների դեպքում՝ 10%<br>Ավտոկայանատեղիների դեպքում՝ 20%<br>(բնակելի նշանակության այլ անշարժ գույք գրավադնելու դեպքում հնարավոր է առանց կանխավճարի) |
| Վարկի ապահովություն | • Անշարժ գույքի գնման իրավունք (հետագայում համապատասխան անշարժ գույքի գրավ)<br>• Հետզնման երաշխիք |
| Վարկի տրամադրման որոշման կայացում | 3 աշխատանքային օրվա ընթացքում |
| Վարկային հայտի նախահաստատման միջնորդավճար (խաղարկությանը մասնակցելուց առաջ) | 30,000 ՀՀ դրամ** |
| Վարկային հայտի քննարկման միջնորդավճար | • Եթե նախահաստատումն իրականացվել է «Արմավիաբանկ» ՓԲԸ-ի կողմից՝ միջնորավճար չի գանձվում<br>• Եթե «Արմավիաբանկ» ՓԲԸ-ի կողմից նախահաստատում չի իրականացվել և շահառուն դիմում է միանգամից վարկավորման համար՝ 15,000 ՀՀ դրամ |
| Մայր գումարի վաղաժամկետ վճարման տույժեր | Բացակայում են |
| Հաշվի բացման և սպասարկման վճարներ | Բացակայում են |
| Ապահովագրություն | Չի պահանջվում |
| Այլ սպասարկման վճարներ | Բացակայում են |

*Հաստատուն տոկոսադրույք սահմանվելու է միայն առաջին 36 ամիսների համար: 37-րդ ամսից սկսած տարեկան տոկոսադրույքը վերանայվելու է տարին 2 անգամ (սահմանված տոկոսադրույքից շեղումը վերանայման արդյունքում կարող է տատանվել 4 տոկոսային կետով (±4%)):

**Շահառու դառնալու խաղարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ նախահաստատման միջնորդավճարը կազմում է 30,000 ՀՀ դրամ: Հետագայում նույն շահառուի վարկի վերջնական հաստատման համար միջնորդավճար չի գանձվում:

Արդշինբանկ

№ 1310-3410

«29» 03 2024թ.

Հայաստանի Հանրապետության
Քաղաքաշինության կոմիտեի նախագահ
պարոն Եղիազար Վարդանյանին

Հարգելի պարոն Վարդանյան,

Ի պատասխան Ձեր՝ 15.03.2024թ.-ի 03/27.4/3725-2024 գրության, որը վերաբերում է ՀՀ Կառավարության 2023թ-ի հոկտեմբերի 19-ի թիվ 1826-Ն որոշմամբ սահմանված հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի Երևան քաղաքում Առնո Բաբաջանյան փողոցի 42/5 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից ծրագրի շրջանակներում համագործակցության և հիփոթեքային վարկերի տրամադրման պայմանների վերաբերյալ առաջարկի ներկայացմանը, տեղեկացնում ենք Ձեզ, որ Բանկը պատրաստ է իր մասնակցությունն ունենալ ծրագրին և առաջարկում է վարկավորման ստորև պայմանները.

| | | |
|---|---|---|
| Վարկի արժույթ | ՀՀ դրամ | |
| Վարկի անվանական տոկոսադրույք<br>1. Մինչ 35 մլն<br>2. 35 մլն ավել | Լողացող* | Հաստատուն/ճշգրտվող ** |
| | ՀԴ+2% /11.5%/ | 13% |
| | ՀԴ + 2.5% /12%/ | 13.6% |
| Նվազագույն կանխավճար*** | 10% | |
| Վարկի ժամկետ | 10-20 տարի | |
| Վարկի առավելագույն գումար | 150.000.000 ՀՀ դրամ | |
| Վարկի տրամադրում | Փուլային | |

«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ ,ք .Երևան, 0015
Գրիգոր Լուսավորիչ, 13
(+37412) 222222
office@ardshinbank.am
ardshinbank.am

| | |
|---|---|
| Վարկի մարման եղանակը | Ամենամսյա հավասարաչափ վճարումներ (անուիտետ) |
| Վարկի ստացման և հետագա սպասարկման հետ կապված ծախսեր | Շահառուն կրում է գրավի պայմանագրի վավերացման ու գրանցման ծախսերը |
| Ապահովագրություն | Իրականացվում է Բանկի կողմից |

*Լողացող տոկոսադրույքով տրամադրվող վարկի Հաշվարկային դրույքի (ՀԴ) արժեքը հավասար է վարկի տրամադրման վերաբերյալ որոշման կայացման պահին Բանկում գործող ՀԴ արժեքին:

**Տոկոսադրույքը վերանայվում է սկսած վարկային պայմանագրի գործողության 37-րդ ամսից՝ Հաշվարկային դրույքի (ՀԴ) փոփոխման դեպքում:

***50% և ավել կանխավճարի դեպքում վարկը կարող է տրամադրվել առանց եկամտի վերլուծության

Հարգանքով՝
Վարչության նախագահ

Արտակ Անանյան

Կատարող՝ Ալբինա Ալեքսանյան
Հեռ.՝ 012-222222 -3116
Էլ.փոստ՝ Albina.Aleksanyan@ardshinbank.am

**«Արդշինբանկ» ՓԲԸ**
Հայաստան, 0015, Երևան,
Գրիգոր Լուսավորչի փող.,13
Հեռ. (374-12) 222222

# INECOBANK

03042024 № G2253

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ՝
Պարոն Եղիազար Վարդանյանին

Հարգելի պարոն Վարդանյան,

Ի պատասխան Ձեր 15/03/2024թ. թիվ 03/274/3725-2024 գրության, ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ-ն հայտնում է իր պատրաստակամությունը մասնակցություն ունենալ Երևան քաղաքի Առնո Բաբաջանյան փողոցի N 42/5 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրի բնակարանների և ավտոկայանատեղիների վարկավորմանը հետևյալ պայմաններով՝

| | |
|---|---|
| Վարկի արժույթ | ՀՀ դրամ |
| Վարկի ժամկետ | 3-20 տարի |
| Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք | 12.75%* |
| Տոկոսադրույքի տեսակ | Լողացող |
| Նվազագույն կանխավճար | Բնակարանի կողմնորոշիչ գնի 10%-ը, ավտոկայանատեղիի՝ 20%-ը |
| Դիմում հայտի ուսումնասիրության միանվագ միջնորդավճար | Չի սահմանվում |
| Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար | 0.5% վարկի գումարից, բայց ոչ պակաս քան 60 000 ՀՀ դրամ |
| Վարկի սպասարկման ամսական միջնորդավճար | Չի սահմանվում |
| Վարկի վաղաժամկետ մարման տուգանք | Չի սահմանվում |
| Ապահովագրություն | Չի սահմանվում |
| Մնացած պայմանները՝ համաձայն Բանկի սակագների և պայմանների | |

* Տոկոսադրույքը առաջին 3 տարին չփոփոխվող, 3 տարին լրանալուց հետո անվանական տոկոսադրույքի բարձրացման և իջեցման առավելագույն շեմը սահմանվում է +/- 1,5 տոկոսային կետ:

Գործադիր տնօրեն՝ Հայկ Ոսկանյան

**INECOBANK CJSC,** 17 Toumanyan str. Yerevan 0001, **Tel.:** +(374 10 ) 510 510
**Fax:** +(37410) 510 573, **e-mail:** inecobank@inecobank.am, **www.inecobank.am**

O.AB.100.11RBD.0.0.5695.24
29.03.2024

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Դավիթ Գրիգորյանին

Հարգելի պարոն Գրիգորյան,

Ի պատասխան Ձեր կողմից 15.03.24 թ. ներկայացված գրության ներկայացնում ենք հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի ներքո Երևան քաղաքի Առնո Բաբաջանյան փողոցի N 42/5 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարանների և ավտոկայանատեղիների հիփոթեքային վարկավորմամբ ձեռքբերման համար «Ամերիաբանկ» ՓԲԸ հետ հնարավոր համագործակցության դեպքում առաջարկվող պայմանները.

- Վարկի արժույթ՝ ՀՀ դրամ,
- Վարկի գումար՝ 3,000,000-150,000,000 ՀՀ դրամ,
- Վարկի ժամկետ՝ 60-240 ամիս,
- Վարկի տարեկան տոկոսադրույք՝ 13-13,5% /ճշգրտվող տոկոսադրույք/,
- Կանխավճար՝ նվազագույնը 10%,
- Վարկի տրամադրման, սպասարկման վճարներ՝ առկա չեն,
- Ապահովագրություն՝ անշարժ գույքի ապահովագրություն վարկի մնացորդի չափով, կատարվում է Բանկի կողմից,
- Վաղաժամկետ մարման տույժ՝ առկա չէ,
- Վարկի մարման եղանակ՝ անուիտետային կամ դիֆֆերենցված:

Հարգանքով՝

«Ամերիաբանկ» ՓԲԸ
Մանրածախ բիզնեսի աջակցման եվ
վարկավորման կենտրոնի ղեկավար՝ Իրինա Աբրահամյան

Կատարող՝ Սարգիս Հովհաննիսյան
Հեռ. 010561111 /43106/

ՀՀ, 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 2
2, Vazgen Sargsyan Str., Yerevan, 0010, RA
www.ameriabank.am
Tel.: (374 10) 56 11 11
Fax: (374 10) 56 11 66
E-mail: office@ameriabank.am

CONVERSE BANK

**TRUSTED BY GENERATIONS**

«04» 07 2024

№ 3-846

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝**
**ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Վարդանյան,

Տեղեկացնում ենք, որ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից փոփոխվել են Բաբաջանյան փողոցի N 42/5 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրում բնակարանային ապահովման ծրագրի շահառուներին առաջարկվող վարկավորման պայմանները, համաձայն որոնց՝

<u>Բնակարանի ձեռք բերման հիփոթեքային վարկ</u>

- Արժույթ – ՀՀ դրամ,
- Ժամկետ – 10 - 20 տարի,
- Անվանական տոկոսադրույք – 12% - 14.65%,
- Վարկային հայտի ուսումնասիրության վճար - չի կիրառվում,
- Վարկի տրամադրման վճար - չի կիրառվում,
- Վարկի վաղաժամկետ մարման տուգանք – չի կիրառվում:

<u>Ավտոկայանատեղիի ձեռք բերման սպառողական վարկ</u>

- Արժույթ – ՀՀ դրամ,
- Ժամկետ – 3 - 5 տարի,
- Անվանական տոկոսադրույք – 15.5%,
- Վարկային հայտի ուսումնասիրության վճար - չի կիրառվում,
- Վարկի տրամադրման վճար - չի կիրառվում:

Միաժամանակ հայտնում ենք մեր պատրաստակամությունը քննարկելու վերը նշված պայմանների հետ կապված ցանկացած հարց:

Հարգանքով,

**ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ,**
**ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ** **ԱՆԴՐԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
079.11/20030-2024
04 07 2024թ.

Կատարող՝ Գայանե Գևորգյան
Հեռ. (93) 778 336